ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐ № 1
№ ԳՀԱՊՁԲ-21-9/35-4 ԳՆՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳՐԻ

ք. Երևան 06 -ը դեկտեմբերի 2021թ.

ՀՀ պաշտպանության նախարարությունը, ի դեմս ՀՀ պաշտպանության նախարարի տեղակալ **Կ. Բրուտյանի**, ով գործում է նախարարության կանոնադրության հիման վրա՝ այսուհետև «Գնորդ», մի կողմից և **«ԿՈՆՑԵՌՆ-ԷՆԵՐԳՈՄԱՇ» ՓԲԸ-ն՝** ի դեմս ընկերության տնօրեն **Բ. Թադևոսյանի**, ով գործում է ընկերության կանոնադրության հիման վրա, մյուս կողմից, այսուհետև՝ «Վաճառող», երկուսը միասին՝ Կողմեր, հիմք ընդունելով **28.10.2021թ.** կնքված № **ԳՀԱՊՁԲ-21-9/35-4** գնման պայմանագրի (այսուհետև՝ Պայմանագիր) 8.1 կետը՝ փոխադարձ համաձայնությամբ կնքեցին սույն համաձայնագիրը (այսուհետև՝ Համաձայնագիր) հետևյալի մասին.

## 1. Համաձայնագրի առարկան

1.1 Կողմերը, հիմք ընդունելով համապատասխան ֆինանսական միջոցներ նախատեսվելու փաստը, փոխադարձ համաձայնությամբ որոշեցին կնքել սույն Համաձայնագիրը՝ սահմանելով Ապրանքների գնման և վճարման ժամանակացույցեր՝ համաձայն **Հավելված № 1-ի և 2-ի:**

1.2 Վաճառողը պարտավորվում է սույն Համաձայնագրով սահմանված կարգով, նախատեսված ծավալներով, ձևով և ժամկետներում Գնորդին կամ նրա կողմից որոշված Ստացողին (այսուհետև՝ Ստացող) մատակարարել՝ Պայմանագրի տեխնիկական բնութագրերով նախատեսված ապրանքներ (այսուհետև՝ Ապրանք)՝ համաձայն № 1 Հավելվածով սահմանված գնման ժամանակացույցի, իսկ Գնորդը պարտավորվում է ընդունել այդ Ապրանքը և վճարել դրա համար՝ վճարման ժամանակացույցով՝ հավելված N 2-ով, նախատեսված ժամանակահատվածում:

## 2. Գինը և վճարման կարգը

2.1 Սույն Համաձայնագրի ընդհանուր գինը կազմում է ***13,595,680 (տասներեք միլիոն հինգ հարյուր իննսունհինգ հազար վեց հարյուր ութսուն) ՀՀ դրամ, ներառյալ ԱԱՀ-ն,*** որը ներառում է Համաձայնագրի կատարումն ապահովելու նպատակով կատարվելիք բոլոր վճարները (ծախսերը), այդ թվում՝ նաև հարկերը, տուրքերը և ՀՀ օրենսդրությամբ սահմանված այլ վճարները:

2.2 Գնորդն իրեն հանձնած Ապրանքի դիմաց վճարումը կատարում է Պայմանագրի 3.3 կետով նախատեսված կարգով, ***15 բանկային օրվա ընթացքում, բայց ոչ ուշ, քան 24.12.2021թ.:***

## 3. Այլ պայմաններ

3.1 Սույն Համաձայնագիրը հանդիսանում է Պայմանագրի անբաժանելի մասը, ուժի մեջ է մտնում կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև Կողմերի փոխադարձ պարտավորությունների լրիվ կատարումը:

3.2 Սույն Համաձայնագրում չնշված՝ գնման Պայմանագրով նախատեսված դրույթները, պայմանները, Կողմերի իրավունքները և պարտականությունները, Ապրանքի մատակարարման, հանձնման-ընդունման, Կողմերի պատասխանատվության հետ կապված և այլ հարաբերություններ թողնվում են անփոփոխ:

3.3 Սույն Համաձայնագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են դատական կարգով:

3.4 Սույն Համաձայնագրում փոփոխություններ և լրացումներ կարող են կատարվել միայն Կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ նոր համաձայնագիր կնքելու միջոցով, որը կհանդիսանա սույն Համաձայնագրի անբաժանելի մասը:

3.5 Սույն Համաձայնագիրը կազմված է 3 էջից, հայերենով, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ: Սույն համաձայնագրի N 1 և 2 Հավելվածները հանդիսանում են սույն Համաձայնագրի անբաժանելի մասը, յուրաքանչյուր կողմին տրվում է մեկական օրինակ:

3.6 Սույն Համաձայնագրով նախատեսված՝ շրջանակներում պատասխանատու ստորաբաժանում է հանդիսանում ՀՀ ԶՈՒ ռազմաբժշկական վարչությունը:

## 4. Կողմերի հասցեները, բանկային վավերապայմանները և ստորագրությունները

| ԳՆՈՐԴ | ՎԱՃԱՌՈՂ |
|---|---|
| ՀՀ պաշտպանության նախարարություն | «Կոնցեռն-Էներգոմաշ» ՓԲԸ |
| ք. Երևան Բագրևանդի 5 | Ք. Երևան, Արզումանյան 32-10 |
| ՀՀ ՖՆ գործառնական վարչություն | «Էյչ-Էս-Բի-Սի բանկ Հայաստան» ՓԲԸ |
| Հ/Հ 900011144129 | Հ/Հ 217002182558001 |
| ՀՎՀՀ 02522157 | ՀՎՀՀ 01210095 |
| ՀՀ պաշտպանության նախարարի տեղակալ | տնօրեն |
| Կ. ԲՐՈՒՏՅԱՆ | Բ. ԹԱԴԵՎՈՍՅԱՆ |

AH 033 7548

Հավելված N 1
N ԳՀԱՊՁԲ-21-9/35-4 պայմանագրին կից
N 1 Համաձայնագրի

# ԳՆՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ

| Գնման առարկայի | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|
| չ/հ | անվանումը | չ/մ | քանակը | միավորի գինը (ՀՀ դրամ) | ընդհանուր գումարը (ՀՀ դրամ) | Մատակարարումը՝ 2021թ., 4-րդ եռամսյակ, բայց ոչ ուշ քան 20.12.2021թ. |
| 5. | Սիլիկոնե խողովակ | հատ | 4 | 22000 | 88,000 | 4 |
| 11. | Ստրոմատոլայզեր | հատ | 60 | 144000 | 8,640,000 | 60 |
| 12. | Ph միկրոէլեկտրոդ | հատ | 3 | 145920 | 437,760 | 3 |
| 13. | Pco2 միկրոէլեկտրոդ | հատ | 3 | 360960 | 1,082,880 | 3 |
| 14. | Po2 միկրոէլեկտրոդ | հատ | 4 | 288720 | 1,154,880 | 4 |
| 15. | Na միկրո էլեկտրոդ | հատ | 4 | 151920 | 607,680 | 4 |
| 16. | K միկրո էլեկտրոդ | հատ | 4 | 132480 | 529,920 | 4 |
| 17. | Ca միկրոէլեկտրոդ | հատ | 4 | 136320 | 545,280 | 4 |
| 18. | Cl միկրոէլեկտրոդ | հատ | 4 | 127320 | 509,280 | 4 |
| **Ընդամեներ** | | | | | **13,595,680** | |

**ԳՆՈՐԴ**

ՀՀ պաշտպանության նախարարություն
ՀՀ պաշտպանության նախարարի տեղակալ

Կ. ԲՐՈՒՏՅԱՆ

**ՎԱՃԱՌՈՂ**

«Կոնցեռն-Էներգոմաշ» ՓԲԸ
տնօրեն

Բ. ԹԱԴԵՎՈՍՅԱՆ

AH 0337548
Լ/ո Աւեգիկ Առաքյան

Հավելված N 2
N ԳՀԱՊՁԲ-21-9/35-4 պայմանագրին կից
N 1 Համաձայնագրի

# ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

| Գնման առարկայի | | | |
|---|---|---|---|
| չ/հ | CPV և ապրանքի անվանումները | CPV կոդը | Վճարումը նախատեսվում է իրականացնել 4-րդ եռամսյակ, բայց ոչ ուշ քան 24.12.2021թ. |
| 5. | **Քիմիական ազդանյութեր (ռեագենտներ)**/սիլիկոնե խողովակ | 33691160/1 | 88,000 |
| 11. | **Լաբորատոր ազդանյութեր (ռեագենտներ)**/Ստրոմատոլայզեր | 33691162/50 | 8,640,000 |
| 12. | **Լաբորատոր օժանդակ և գիտական նյութեր**/pH միկրոէլեկտրոդ | 33691167/27 | 437,760 |
| 13. | **Լաբորատոր օժանդակ և գիտական նյութեր**/pCO2 միկրոէլեկտրոդ | 33691167/28 | 1,082,880 |
| 14. | **Լաբորատոր օժանդակ և գիտական նյութեր**/pO2 միկրոէլեկտրոդ | 33691167/29 | 1,154,880 |
| 15. | **Լաբորատոր օժանդակ և գիտական նյութեր**/Na միկրո էլեկտրոդ | 33691167/31 | 607,680 |
| 16. | **Լաբորատոր օժանդակ և գիտական նյութեր**/K միկրո էլեկտրոդ | 33691167/32 | 529,920 |
| 17. | **Լաբորատոր օժանդակ և գիտական նյութեր**/Ca միկրոէլեկտրոդ | 33691167/33 | 545,280 |
| 18. | **Լաբորատոր օժանդակ և գիտական նյութեր**/Cl միկրոէլեկտրոդ | 33691167/34 | 509,280 |
| **Ընդամենը** | | | **13,595,680** |

**ԳՆՈՐԴ**

ՀՀ պաշտպանության նախարարություն
ՀՀ պաշտպանության նախարարի տեղակալ

Կ. ԲՐՈՒՏՅԱՆ

**ՎԱՃԱՌՈՂ**

«Կոնցեռն-Էներգոմաշ» ՓԲԸ
տնօրեն

Բ. ԹԱԴԵՎՈՍՅԱՆ

AH 0337548